ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2074-Ա « 20 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 7149-Ա, 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 3405-Ա, 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N 1644-Ա, 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N 771-Ա ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 4228-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվերով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 38-Ն հրամանը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 7149-Ա որոշման 1-ին կետի 1.10-րդ ենթակետով հաստատված 63-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի, 64-րդ հավելվածը՝ համաձայն N 4 հավելվածի, 65-րդ հավելվածը՝ համաձայն N 13 հավելվածի, 66-րդ հավելվածը՝ համաձայն N 5 հավելվածի, 67-րդ հավելվածը՝ համաձայն N 14 հավելվածի, 68-րդ և 69-րդ հավելվածները՝ համաձայն N 7 և N 8 հավելվածների, 70-րդ հավելվածը՝ համաձայն N 16 հավելվածի, 71-րդ և 72-րդ հավելվածները՝ համաձայն N 10 և N 11 հավելվածների, 73-րդ և 74-րդ հավելվածները՝ համաձայն N 18 և N 19 հավելվածների:

2. Երևանի քաղաքապետի 2019 թվականի սեպտեմբերի 20-ի «Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի Հ.7149-Ա, 2011 թվականի ապրիլի 21-ի Հ.1468-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 3-ի Հ.6133-Ա, 2017 թվականի հուլիսի 11-ի Հ.2359-Ա որոշումներով հաստատված հավելվածները ուժը կորցրած ճանաչելու և

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 3405-Ա որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով հաստատված 6-րդ և 7-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 9 և N 12 հավելվածների:

3. Երևանի քաղաքապետի 2021 թվականի մայիսի 21-ի «Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի Հ.7149-Ա, 2011 թվականի փետրվարի 1-ի Հ.215-Ա, 2011 թվականի մարտի 24-ի Հ.937-Ա, 2012 թվականի հունվարի 27-ի Հ.665-Ա, 2014 թվականի ապրիլի 11-ի Հ.1386-Ա, 2019 թվականի սեպտեմբերի 20-ի Հ.3405-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 1644-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատված 18-րդ և 19-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 6 և 15 հավելվածներիի:

4. Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 29-ի «Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի Հ.7149-Ա, 2011 թվականի մայիսի 19-ի Հ.1967-Ա, 2011 թվականի հունիսի 29-ի Հ.2809-Ա, 2012 թվականի դեկտեմբերի 24-ի Հ.8006-Ա, 2017 թվականի հուլիսի 11-ի Հ.2359-Ա, 2019 թվականի մարտի 20-ի Հ.780-Ա, 2019 թվականի սեպտեմբերի 20-ի Հ.3405-Ա, 2020 թվականի օգոստոսի 25-ի Հ.2593-Ա, 2021 թվականի մայիսի 21-ի Հ.1644-Ա, 2021 թվականի մայիսի 24-ի Հ.1658-Ա, 2022 թվականի փետրվարի 4-ի Հ.336-Ա, 2022 թվականի հունիսի 6-ի Հ.2026-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 12-ի Հ.3243-Ա, 2023 թվականի հուլիսի 4-ի Հ.1923-Ա, 2023 թվականի հուլիսի 13-ի Հ.2067-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 771-Ա որոշման 1-ին կետի 56-րդ և 80-րդ ենթակետերով հաստատված 56-րդ և 80-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 17 և N 20 հավելվածների:

5. Երևանի քաղաքապետի 2025 թվականի հոկտեմբերի 16-ի «Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի հ.7149-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 4228-Ա որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով հաստատված 1-ին և 2-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 և N 3 հավելվածների:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ